ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պատմ. գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռոբերտ Ղազարյան
29.06.2022

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՆԱՐԵԿ ԳԱԳԻԿԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ
«ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1988-1990 ԹԹ.»
Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
մասին

Նարեկ Շարաֆյանի ատենախոսության թեման ունի գիտական և արդիական-ճանաչողական յուրահատուկ նշանակություն, քանի որ այն վերաբերվում է նորագույն շրջանում Ադրբեջանի պետության կողմից հայ բնակչության նկատմամբ իրագործված ոճրագործ քաղաքականության համակողմանի վերհանմանը: Ընդ որում ատենախոսի կատարած ծավալուն հետազոտական աշխատանքի շնորհիվ ընթերցողը լիարժեք հնարավորություն է ստանում ամբողջական պատկերացում կազմել ադրբեջանական ոճրագործությունների նպատակադրման, դրանց ծրագրման, իրականացման մեխանիզմների, առանձնահատկությունների ու հետևանքների մասին:

Ատենախոսությունն աչքի է ընկնում բավականին կուռ կառուցվածքով: Առանձնապես գովելի ու գնահատելի է, որ այն բաղկացած է ոչ թե այլոց համար սովորական դարձած 3, այլ 4 գլուխներից:

Ատենախոսության առաջին գլուխը («Հայերի զանգվածային ջարդերի Խորհրդային Ադրբեջանի քաղաքականության նախահիմքերը») բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնցում հեղինակը համառոտ անդրադառնում է 1918 թ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ստեղծմանը, ինչպե՛ս 1918-1920 թթ., այնպե՛ս էլ խորհրդայնացումից հետո այդ երկրի էթնիկ խտրականության

քաղաքականության բնույթին և նպատակադրմանը: Կատարվում են կարևոր տեսական հիմնավորումներ:

Ատենախոսության երկրորդ գլուխը («Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործությունները») բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից յուրաքանչյուրում հեղինակը ներկայացնում է համապատասխանաբար այդ ջարդերի նախապատրաստումը, դրանց իրագործումը և հետևանքները: Հեղինակը ցեղասպանագիտական հատուկ մեթոդաբանության կիրառումով կարևոր իրավաբանական-տեսական եզրակացությունների է հանգում:

Աշխատանքի երրորդ գլուխը, որը վերնագրված է «Կիրովաբադի (Գանձակ) և Բաքվի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն և այլ հանցագործություններ», բաղկացած է 3 ենթագլուխներից, որոնցում ատենախոսն անդրադառնում է ոչ միայն Գանձակ և Բաքու քաղաքներում հայկական ջարդերի կազմակերպման ու իրականացման հետ կապված բազմակողմանի խնդիրներին, այլև դրանց դատապարտման հիմնահարցին: Ընդ որում վերջինը քննարկվում է վերջին ցեղասպանագիտական տեսական գրականութեան համապարփակ օգտագործումով:

Ատենախոսության ավարտական չորրորդ գլխում («Հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի հանցավոր քաղաքականության ընդհանուր որակման և պատասխանատվության խնդիրը»), որը բաղկացած է երկու ենթագլուխներից, շոշափվում են Խորհրդային Ադրբեջանում ու վերջինիս իրավահաջորդ Ադրբեջանի Հանրապետությունում հայության նկատմամբ խտրական և ժխտողական դիրքորոշմանը վերաբերող խնդիրները: Մեծ իրավագիտական ճշգրտությամբ պարզաբանվում է, թե ինչ աստիճանի է ադրբեջանական այդ դիրքորոշումը հակասում միջազգային իրավունքի պարզագույն նորմերին:

Եզրակացությունների բաժնում հեղինակը պատշաճորեն ամփոփել է ատենախոսության հիմնական դրույթները և իր հետազոտության եզրահանգումները:

Քննարկման մասնակիցները կատարեցին նաև որոշ դիտողություններ, որոնց հաշվի առնելը կարող է օգտակար լինել ատենախոսին՝ աշխատության հետագա գիտական լրամշակման և հրատարակման պարագայում:

1. Հեղինակը որոշ շփոթի մեջ է հայտնվում Արևելյան Այսրկովկասում Ադրբեջան պետության ստեղծման, այդ անվան ծագումնաբանության և վերագրման

իրավացիության հարցերը քննելիս: Մի դեպքում նա գրում է, որ Ադրբեջան անունը երբեք չի վերաբերվել Արաքսից հյուսիս ընկած տարածքին, մյուս դեպքում օգտագործում է հակառակ օրինակներ, որոնք, իհարկե, բացառություններ են եղել:

2. Հեղինակը սխալմամբ Մուսավաթ կուսակցության հիմնադիր է համարում Մեհմեդ Էմին Ռասուլզադեին, մինչդեռ վերջինս այդ կուսակցությանը միացել է միայն 1913 թվականին:

3. Խոսելով կովկասյան թաթար/թուրքերի մոտ հայերի նկատմամբ ձևավորված ընդհանուր ընկալման մասին՝ հեղինակը կիրառում է «օտար» բառը, հետևելով «յուրային-օտար» տարբաժանմանը, մինչդեռ հայերի նկատմամբ ձևավորված ընկալումը անցնում էր «օտար»-ի ենթադրած սահմանները և ստանում ընդհանուր թշնամու բովանդակություն:

4. Ատենախոսը խորհրդային իշխանության կիրառած «коренизация» կոչված երևույթի համար, որի ռուսերեն բառացի իմաստն է «[ղեկավար կադրերի] բնիկավորում», «բնիկայնացում», «տեղականացում», հայերեն թարգմանություն է համարում «արմատավորում» եզրույթը, որը, սակայն, բոլորովին այլ և կոնկրետ իմաստ ունի:

Միաժամանակ քննարկման մասնակիցները նշեցին, որ տվյալ դիտողություններն ամենևին չեն մթագնում ատենախոսության անվիճելի արժանիքները և կարող են համարվել լոկ առանձին թերություններ: Նրանց համոզմամբ՝ քննարկվող աշխատանքն աղբյուրների ու գրականության ամբողջական օգտագործմամբ, տեսական հագեցվածությամբ և հետազոտական ակնհայտ արժանիքներով կարելի է համարել հիմնարար գիտական ուսումնասիրություն, որի հեղինակը լիովին արժանի է հայցվող՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ելնելով վերոնշյալից՝ հնարավոր ենք համարում միջնորդել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող 004 մասնագիտական խորհրդին՝ դրական գնահատական տալ Նարեկ Գագիկի Շարաֆյանի «Հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի զանգվածային ոճրագործությունների քաղաքականությունը 1988-1990 թթ.» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությանը: Այն լիովին բավարարում է Է.00.01

մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության համար ՀՀ ԲՈԿ-ի առաջադրած պահանջներին, ուստի ատենախոսը միանգամայն արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքն ընդունվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի 2022 թ. հունիսի 23-ի ընդլայնված նիստում (արձանագրություն հմ 16):

Բաժնի նիստին ներկա էին և քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի վարիչ, պ.գ.դ. Ա. Հակոբյանը, Քրիստոնյա Արևելքի բաժնի ավագ գիտաշխատողներ, պ.գ. թեկնածուներ Ա. Մաթևոսյանը, Գ. Մարգարյանը, Գ. Մխիթարյանը, Կ. Ավետյանը և Բ. Մաիլյանը, ասպիրանտ Ա. Հարությունյանը, ավագ լաբորանտ Ա. Տոնոյանը: Նիստում ելույթ ունեցան. Ա. Հակոբյանը, Ա. Մաթևոսյանը, Կ. Ավետյանը, Բ. Մաիլյանը, Գ. Մխիթարյանը և ասպիրանտ Ա. Հարությունյանը:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ, պ.գ.դ. Ալեքսան Հակոբյան

Կարծիքը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն,
պ.գ.թ., դոցենտ Գոռ Մարգարյան